



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	3
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	6
ՀՀ պետական բյուջեի եկամուտները	7
ՀՀ պետական բյուջեի ծախսերը	9
ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման	12
ՀՀ պետական բյուջեի պակասուրդը և հարկաբյուջետային ազդակը	18
ՀՀ պետական պարտքը	20
ԱՄՓՈՓՈՒՄ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետական բյուջեն իրենից ներկայացնում է կառավարության ֆինանսական պլանը առաջիկա տարվա համար, որտեղ ներառվում է տեղեկատվություն այն մասին, թե ինչ ծրագրեր են ֆինանսավորվելու, և որոնք են լինելու պետական եկամուտների և բյուջետային մուտքերի աղբյուրները: Բնականաբար, բյուջեի հիմքում ընկած է տնտեսական իրավիճակից բխող հնարավորությունների շրջանակը (եկամուտները), ինչպես նաև կառավարության ստանձնած պարտավորությունները և ծրագրային առաջնահերթությունները:

Տնտեսական իրավիճակը բավական տատանումներ է ունեցել վերջին տարիներին, քանի որ ցնցումներ առաջացնող գործոններն առավել հաճախակի են սկսել ի հայտ գալ, որոնցից անմասն չի մնում նաև ՀՀ տնտեսությունը: Մասնավորապես, տնտեսության վրա առավել մեծ ազդեցություն ունեցող երևույթներից էր COVID-19 համավարակը, որի հետևանքները դեռևս ամբողջությամբ հաղթահարած չլինելով, սկսվեց ռուս-ուկրաինական հակամարտության սրումը՝ նոր մարտահրավեր առաջ բերելով աշխարհի տնտեսությունների համար: ՀՀ-ի դեպքում, սակայն, վերջինս ստեղծեց նոր տնտեսական հնարավորություններ՝ դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի ներհոսքի, ինչպես նաև արտահանման և զբոսաշրջության աճի տեսքով: Արդյունքում 2022թ. ՀՀ տնտեսական աճի տեմպը եղել է բավական բարձր՝ կազմելով 12.6%, իսկ 2023թ. այն շարունակել է պահպանվել բարձր մակարդակում, և սպասվում է, որ տարվա արդյունքներով իրական ՀՆԱ-ի աճը կկազմի ավելի քան 7.0%:

Տնտեսության բարձր աճը մեծացնում է նաև պետական բյուջեի հնարավորությունները, քանի որ մի կողմից աճում են հարկային եկամուտները, մյուս կողմից նվազում է պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ մեծացնելով հարկաբյուջետային տարածքը: Սակայն, Հայաստանի դեպքում, բացի վերը նշված իրադարձություններից, առկա են նաև այլ մարտահրավերներ, մասնավորապես՝ իրավիճակը Արցախում և Արցախից բռնի տեղահանված բնակչության ներհոսքը Հայաստան: Բռնի տեղահանված բնակչությանն աջակցելը և անհրաժեշտ կեցության և աշխատանքային պայմաններով ապահովելը զգալի ծախսերի հետ է կապված, ինչը պետք է արտացոլված լինի պետական բյուջեում:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ կարող ենք նշել, որ պետական բյուջեի ուսումնասիրությունը բավական կարևոր է հասկանալու համար նախ՝ առաջիկա տարվա տնտեսական զարգացումների վերաբերյալ կառավարության սպասումները, այնուհետև՝ առկա ռեսուրսների օգտագործման ուղղությունները:

Վերջիններս պետք է համահունչ լինեն կառավարության կողմից հանձն առնված պարտավորություններին, քանի որ դրանց ֆինանսավորումից է կախված իրագործման հնարավորությունը:

Սույն վերլուծությունում նպատակ է դրվել նախ ուսումնասիրել մակրո մակարդակում տնտեսական զարգացումները և դրանց հարկաբյուջետային հետևանքները, ինչպես նաև քննարկել կառավարության կողմից որդեգրված ծախսային ուղղությունները, դրանց իրատեսականությունը և համապատասխանությունը ստեղծված իրավիճակին:

Ընդհանուր առմամբ, ինչպես նշվեց վերևում, տնտեսական աճը բավական դրական դինամիկա է ունեցել 2022-2023 թվականներին, ինչը լավ հիմք է հանդիսանում 2024թ. էականորեն մեծացնելու բյուջեի ռեսուրսները և ավելի մոտենալու սահմանված թիրախների իրականացմանը: Սակայն, միևնույն ժամանակ առկա են ռիսկեր հաջորդ տարվա տնտեսական աճի թիրախավորված մակարդակի ապահովման ուղղությամբ, ինչը որոշակիորեն կդժվարացնի ծախսերի ամբողջական իրականացումը:

2024թ. բյուջեն նաև առանձնանում է բյուջետային գործարքների գրանցման որոշակի տեխնիկական փոփոխությունների առումով: Մասնավորապես, առկա է երկու կարևոր փոփոխություն.

1. Հիպոթեքային վարկերի գծով եկամտային հարկի վերադարձը, որը նախկինում նվազեցվում էր հարկերից, հաջորդ տարվանից դառնալու է ծախսային միջոցառում: Այսինքն՝ եկամտային հարկի մուտքերն ամբողջությամբ արտացոլվելու են բյուջեի եկամուտներում, իսկ վերադարձված գումարները արտացոլվելու են բյուջեի ծախսերում: Արդյունքում հավասարապես մեծանալու են ինչպես եկամուտները, այնպես էլ ծախսերը, սակայն բովանդակային փոփոխություն տեղի չի ունենալու:
2. Արցախից բռնի տեղահանված բնակչությանն աջակցելու նպատակով կառավարությունը նախատեսում է ծախսել այն գումարները, որոնք մինչև 2023թ. սեպտեմբերի 19-ի դեպքերը նախատեսված էին Արցախին ուղղվող վարկավորման համար: Սա նշանակում է, որ 2024թ. բյուջեի ծախսերը մեծանալու են (մեծանալու է նաև պակասուրդը), սակայն լրացուցիչ ֆինանսավորման կարիք չի առաջանալու (քանի որ այդ չափով բյուջեից ելք արդեն իսկ նախատեսված էր): Հետևաբար, 2024թ. բյուջեի պակասուրդը նախորդ տարիների հետ համեմատելիս պետք է համեմատվող տարիների պակասուրդին ավելացվի Արցախին ուղղվող վարկավորումը, որպեսզի ցուցանիշները դառնան համադրելի:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Ռուս-ուկրաինական հակամարտության աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերների և դրա բացասական ազդեցությունների հետևանքով համաշխարհային տնտեսության աճի տեմպը դանդաղել է 2022թ. և մնացել է ցածր մակարդակում նաև 2023 թվականին: Մինչդեռ ՀՀ տնտեսության համար այդ տարիներին ստեղծվել են նոր տնտեսական հնարավորություններ (հիմնականում ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցների արդյունքում)՝ դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի ներհոսքի, ինչպես նաև արտահանման և զբոսաշրջության աճի տեսքով: Արդյունքում 2022թ. գրանցվել է 12.6% տնտեսական աճ՝ հիմնականում արտացոլվելով ծառայությունների ոլորտում, իսկ 2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության աճը կազմել է 9.2%:

Վերոհիշյալ զարգացումների պայմաններում 2023թ. համար սպասվում է առնվազն 7.0% տնտեսական աճ: Ընդ որում, ՀՀ կառավարության սպասումները առավել օպտիմիստական են, ըստ որոնց տնտեսական աճը կլինի 7.4%: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) կանխատեսումները նույնպես այդ ցուցանիշի շուրջ են, սակայն փոքր-ինչ ավելի ցածր են՝ կազմելով 7.0% և 7.2%: ՀՆԱ-ի դեֆլյատորի (համախառն ներքին արտադրանքի գների աճի) վերաբերյալ կառավարության սպասումը նույնպես լավատեսական է և կազմում է 3.5%:


2024թ. համար ՀՀ կառավարության և անկախ կառույցների կանխատեսումները միմյանցից ավելի շատ են տարբերվում: Մասնավորապես, կառավարությունը շարունակում է առաջնորդվել 7.0% տնտեսական աճի թիրախով, մինչդեռ ԱՄՀ և ԿԲ կանխատեսումները ավելի ցածր են՝ համապատասխանաբար 5.0% և 5.6%: Բնականաբար, եթե փաստացի տնտեսական աճը կառավարության թիրախից ավելի ցածր լինի, ապա խնդիրներ կառաջանան բյուջեի կատարման տեսանկյունից, քանի որ պլանավորված հարկային եկամուտները նույնպես թերի կհավաքագրվեն: Այս առումով, պետք է հիշել, որ **2023թ. բարձր տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր բազայի ազդեցության պահպանմամբ (տարեսկզբին աճի տեմպերը էականորեն ավելի բարձր էին, քան տարվա երկրորդ կեսին), ինչը ենթադրում է, որ տնտեսական աճի հետագա դանդաղումը առավել հավանական է:**

Միևնույն ժամանակ, բյուջետային ուղերձում նշվում է, որ իրականում կառավարության կողմից 2024թ. տնտեսական աճը նույնպես կանխատեսվում է 5.6%-ի չափ, իսկ 7% աճի թիրախին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել

լրացուցիչ մասնավոր ներդրումների և արտահանման ծավալների աճ: Սակայն այս աճերի մասով նախատեսված հստակ միջոցառումներ հնարավոր չէ գտնել բյուջեի փաստաթղթերում: Հետևաբար, կարելի է նշել, որ առկա են որոշակի ռիսկեր 2024թ. տնտեսական աճի՝ կանխատեսվածից ցածր լինելու ուղղությամբ:

Գնաճի՝ սպառողական գների ինդեքսի վերաբերյալ կառավարության կանխատեսումները բավական մոտ են ԿԲ կանխատեսումներին: 2023թ. վերջում գնաճը կկազմի 0.4%, իսկ հաջորդ տարի կարագանա՝ տարեվերջին հասնելով 4.0%-ի:

Գծապատկեր 1. 2023 և 2024 թվականների տնտեսական աճի կանխատեսումները, %



Ըստ բյուջեի հիմքում դրված կանխատեսումների՝ ինչպես 2023թ., այնպես էլ 2024թ. սպասվում է աճ տնտեսության բոլոր ճյուղերում, այդ թվում՝ արդյունաբերությունում, որտեղ ընթացիկ տարում դիտվում են անկման ցուցանիշներ, և գյուղատնտեսությունում, որտեղ աճը բավական ցածր է: Մասնավորապես, արդյունաբերության ոլորտում 2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով գրանցվել է 0.5% անկում, որն ունի վատթարացման դինամիկա (տարեսկզբից աճի տեմպն աստիճանաբար դանդաղում է): Այս պայմաններում, բյուջեի հիմքում դրված սցենարում կանխատեսվել է արդյունաբերության ոլորտի աճ ինչպես 2023, այնպես էլ 2024 թվականների համար, սակայն որևէ հստակ միջոցառում արդյունաբերության ոլորտին խթանելու ուղղությամբ բյուջեում ներառված չէ: 2023-ին կանխատեսվում է շինարարության և ծառայությունների՝ մյուս ոլորտների համեմատ առաջանցիկ աճեր, որոնք, սակայն, 2024թ. որոշակիորեն կդանդաղեն:

ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչներից, ըստ կառավարության կանխատեսումների, էական բարձր աճի տեմպ կունենա «հիմնական միջոցներում ներդրումներ» բաղադրիչը՝ աճելով 23.2%-ով, այդ թվում՝ պետական կապիտալ ծախսերի աճի հաշվին (իհարկե, եթե դրանք չթերակատարվեն տարվա արդյունքներով), իսկ սպառման աճը կկազմի 8.7%: Այս ցուցանիշները նույնպես հաջորդ տարի կդանդաղեն՝ կազմելով համապատասխանաբար 11.8% և 7.7%:

Աղյուսակ 1. 2024թ. պետական բյուջեի հիմքում դրվող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները¹

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2020	2021	2022	2023	2024
	փաստ.			սպասում	ծրագիր
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,181.9	6,991.8	8,501.4	9,450.1	10,516.1
Տնտեսական աճ, %	-7.2	5.8	12.6	7.4	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.8	6.9	8.0	3.5	4.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	3.7	7.7	8.3	0.4	4.0
Գնաճ (միջին), %	1.2	7.2	8.6	2.2	3.2
ՀՆԱ իրական աճը՝ ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %					
Արդյունաբերություն	-1.4	2.4	6.0	0.8	4.7
Գյուղատնտեսություն	-3.7	-0.8	-0.7	1.2	3.5
Շինարարություն	-5.9	3.1	18.8	17.6	8.9
Ծառայություններ	-9.6	8.6	18.3	8.6	7.9
Զուտ հարկեր	-9.9	7.4	8.1	12.2	7.3
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %					
Վերջնական սպառում	-10.9	1.3	5.6	8.7	7.7
Պետական	9.2	-6.2	6.3	3.3	9.0
Մասնավոր	-14.0	2.8	5.4	9.7	7.5
Հիմնական միջոցներում ներդրումներ ²	-1.5	23.6	9.0	23.2	11.8
Պետական	6.1	26.0	12.3	49.1	15.5
Մասնավոր	-3.1	23.0	8.2	16.8	10.6
Արտահանում	-33.5	18.6	59.3	17.7	12.5
Ներմուծում	-31.5	12.9	34.5	25.6	14.9
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)					
Ընթացիկ հաշիվ	-505.4	-483.0	151.0	-965.8	-1,232.1
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,264.1	-1,107.9	-148.2	-537.0	-632.0
Արտահանում	3,818.2	5,011.9	10,038.2	13,239.0	14,359.3

¹ ՀՀ կառավարության 2024 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր:

² Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն, այլ կերպ ասած՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:

Փոփոխություն, %	-34.1	31.3	100.3	31.9	8.5
Ներմուծում	5,082.3	6,119.7	10,186.4	13,775.9	14,991.3
Փոփոխություն, %	-33.2	20.4	66.5	35.2	8.8
Դրամական փոխանցումներ	1,072.1	1,274.0	1,538.3	1,223.0	1,270.6
ՀՆԱ-ի նկատմամբ %					
Ընթացիկ հաշիվ	-4.0	-3.5	0.8	-4.0	-4.8
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-10.0	-8.0	-0.8	-2.2	-2.5
Արտահանում	30.2	36.1	51.4	55.0	56.4
Ներմուծում	40.2	44.1	52.2	57.2	58.9
Դրամական փոխանցումներ	8.5	9.2	7.9	5.1	5.0

Արտաքին առևտրի մասով 2022թ. էական բարձր ցուցանիշները բնականաբար չեն պահպանվի 2023 և 2024 թվականներին: Արտահանման աճը 2023թ. կդանդաղի՝ հասնելով 31.9%-ի, իսկ ներմուծման աճը՝ 35.2%-ի: Աճի տեմպերի դանդաղումը կշարունակվի նաև 2024 թվականին: Արդյունքում, ընթացիկ հաշվի մնացորդը (որը ցույց է տալիս դեպի երկիր ներհոսող և երկրից արտահոսող արտաբերության միջոցների տարբերությունը) կվատթարանա՝ 2023թ. հասնելով -4.0%-ի, իսկ 2024-ին՝ -4.8%-ի:


ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. հունվար-հոկտեմբերին աճել են բարձր տեմպով՝ շուրջ 14.0%-ով, իսկ հարկային եկամուտները աճել են 15.0%-ով՝ գերազանցելով տնտեսական ակտիվության անվանական աճի տեմպը: Բյուջեի ծախսերի աճը նույնպես բարձր է եղել նույն ժամանակահատվածում՝ կազմելով 14.3%, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի պակասուրդ՝ շուրջ 19.0 մլրդ դրամի չափով: Ըստ կառավարության կանխատեսումների՝ մինչև տարեվերջ բյուջեի պակասուրդն առավել կխորանա՝ հասնելով 245.3 մլրդ դրամի: Այս սպասումները ենթադրում են նաև, որ բյուջեի եկամուտների աճի տեմպը կպահպանվի բարձր մակարդակում՝ կազմելով 14.7%, իսկ ծախսերի աճը կկազմի 16.4%: Այս սցենարում հաշվի է առնված, որ իրականացվելու է շուրջ 562.1 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ (հիմնականում կապիտալ ծախսեր), սակայն 2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով դեռևս իրականացվել է 266.9 մլրդ դրամի չափով կապիտալ ծախս: Հետևաբար, ծախսերի աճը տարեվերջին կարող է սպասվածից ավելի փոքր լինել՝ հանգեցնելով ավելի փոքր պակասուրդի:

2024թ. ինչպես եկամուտների այնպես էլ ծախսերի գծով սպասվում է աճի բարձր տեմպերի պահպանում: Մասնավորապես եկամուտների աճը կկազմի շուրջ

13.1%, իսկ ծախսերի աճը՝ 20.8%: Բյուջեի պակասուրդը կաճի՝ հասնելով շուրջ 482.9 մլրդ դրամի՝ 2023-ի սպասվող ցուցանիշի համեմատ ավելանալով 237.6 մլրդ դրամով: Հաջորդ տարվա բյուջետային ծախսերում ներառված են նաև Արցախից բռնի տեղահանված բնակչության աջակցությանն ուղղվող ծախսերը, որոնք իրականացվելու են նախկինում Արցախին ուղղվող վարկավորման համար նախատեսված միջոցների հաշվին:

Գծապատկեր 2. Պետական բյուջեների ցուցանիշների համեմատականը 2022-2024թթ., մլրդ դրամ




Սակայն, և՛ եկամուտների հավաքագրումը, և՛ ծախսերի իրականացումը պարունակում են ռիսկեր, որոնց մասին առավել մանրամասն կներկայացնենք հաջորդ բաժիններում:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

ՀՀ պետական բյուջեի եկամուտներում հարկային եկամուտների դերը մշտապես գերակշիռ է եղել, որը կշարունակի աճել նաև 2023 և 2024 թվականներին՝ կազմելով համապատասխանաբար 94.6% և 96.0%: Վերջինս պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների բարձր աճերի կանխատեսմամբ, այնպես էլ հարկային եկամուտների ցուցանիշում հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի ներառմամբ, որը նախկինում հարկային եկամուտների ցուցանիշում ներառված չէր:

Գծապատկեր 3. Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2019-2024 թվականներին³, %




Ըստ բյուջեի հիմքում դրված կանխատեսումների՝ 2023թ. հարկային եկամուտների աճը կկազմի 18.3% (եթե նախորդ տարվա ցուցանիշում նույնպես հաշվի առնենք եկամտային հարկի վերադարձը, ապա աճը կլինի 16.1%), իսկ 2024թ.-ին՝ 14.7%: Երկու դեպքում էլ հարկային եկամուտների աճն էականորեն գերազանցում է տնտեսական աճին, ինչի արդյունքում սպասվում է, որ 2023 թվականին հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կբարելավվի 1.4 տոկոսային կետով (եթե նախորդ տարվա ցուցանիշում նույնպես հաշվի առնենք եկամտային հարկի վերադարձը, ապա բարելավումը կկազմի 1.0 տոկոսային կետ), իսկ 2024թ.՝ ևս 0.75 տոկոսային կետով: Ընդ որում, 2024թ. բարելավումը կապահովվի ինչպես վարչարարության բարելավման (շուրջ 0.5 տոկոսային կետով), այնպես էլ օրենսդրական բարեփոխումների (շուրջ 0.25 տոկոսային կետով) արդյունքում: Օրենսդրական փոփոխությունները հիմնականում ուղղված են լինելու հարկային բեռի ավելացմանը՝ ներառելով ակցիզային հարկերի բարձրացում, մեքենաների բնապահպանական վճարների բարձրացում, շրջանառության հարկի բեռի բարձրացում, եկամտային հարկի վերադարձի սահմանափակում և այլն:

2024թ. բյուջեի կանխատեսումներում ներկայացվել են նաև հարկային եկամուտների՝ ըստ հարկատեսակների կանխատեսումները, որոնց համաձայն, 2023թ. հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված կլինի շահութահարկի, ԱԱՀ-ի և եկամտային հարկի աճերի հաշվին, որոնց նպաստումները կկազմեն համապատասխանաբար 6.0, 5.8, 4.1 տոկոսային կետ: 2024 թվականին հարկային եկամուտների աճը նույնպես հիմնականում

³ 2023 և 2024 թվականների ցուցանիշներում հիպոթեթային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները ներառված են հարկային եկամուտներում:

կապահովվի այդ հարկատեսակների հաշվին: Հարկեր/ՀՆԱ-ի բարելավումը 2023-ին հիմնականում տեղի կունենա շահութահարկի հաշվին, իսկ 2024-ին՝ բոլոր հարկատեսակների հաշվին՝ համամասնորեն:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի հարկային եկամուտները և հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը⁴



Ոչ հարկային եկամուտների գծով մուտքերը 2024 թվականի համար ծրագրվել են 87.7 մլրդ դրամի չափով, որը 2023թ. սպասվող ցուցանիշի համեմատ պակաս է 22.4%-ով, իսկ 2022թ. փաստացի ցուցանիշից՝ 28.2%-ով: Ոչ հարկային եկամուտների պլանավորվող ցուցանիշը վերջին տարիներին միշտ ավելի ցածր է, քան փաստացին, քանի որ պլանավորման փուլում չի նախատեսվում ծախսերի թերակատարում և ազատ ռեսուրսների տեղաբաշխում՝ որպես ավանդ: Սակայն փաստացի իրականացման փուլում հենց այդպես էլ լինում է, և ազատ ռեսուրսները որպես ավանդ տեղաբաշխելու արդյունքում ոչ հարկային եկամուտները գերակատարվում են: Պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը 2024թ. կկազմեն 22.3 մլրդ դրամ՝ շուրջ 29.2%-ով ավելի լինելով 2023թ. սպասվող ցուցանիշից և շուրջ 48.6%-ով՝ 2022թ. փաստացի ցուցանիշից:


ՀՀ պետական բյուջեի ծախսերը

Պետական բյուջեի ծախսերի աճը 2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել է 14.3%, որին 10.3 տոկոսային կետով նպաստել է ընթացիկ ծախսերի աճը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) աճը նպաստել է 3.9 տոկոսային կետով: Ըստ

⁴ 2023-2024 թվականների հարկային եկամուտների ցուցանիշներում հիպոթեթային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները ներառված են, մինչդեռ 2019-2022 թվականների ցուցանիշներում դրանք ներառված չեն:

կառավարության կանխատեսումների՝ բյուջեի ընթացիկ ծախսերի տեմպը կապահպանվի գրեթե նույն մակարդակում մինչև տարեվերջ, սակայն կապիտալ ծախսերի աճի տեմպն էականորեն կարագանա: Այսպես, ընթացիկ ծախսերի հունվար-հոկտեմբերի 11.8% աճը տարեվերջին կդառնա 12.3%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների 32.6% աճը կդառնա 47.8%: Ընդ որում, ընթացիկ ծախսերի 2023թ. ցուցանիշում հաշվի է առնված եկամտային հարկի վերադարձը, որը եթե 2022-ի ցուցանիշում նույնպես հաշվի առնենք, ապա 2023-ի աճը կկազմի 10.1%:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման




Կապիտալ ծախսերի մասով աճի տեմպի արագացումը ենթադրում է, որ կատարողականը էապես պետք է բարելավվի տարվա վերջին ամիսներին: Դա հնարավոր կլինի միայն այն պարագայում, եթե պարզվի, որ ներկայումս ծրագրերը իրականացվում են, սակայն բյուջեից դեռևս վճարումներ չեն արվում: Սակայն, տարիների փորձը ցույց է տալիս, որ թեև տարվա կատարողականը որոշակիորեն բարելավվում է ինն ամսվա համեմատ, սակայն շարունակում է մնալ ոչ բավարար մակարդակում: Մասնավորապես, 2022թ. ինն ամիսների կատարողականը կազմում էր 63.2%, սակայն տարվա ցուցանիշը՝ 94.9%, ինչը զգալիորեն ավելի բարձր է ինչպես ինն ամիսների, այնպես էլ 2021թ. կատարողականից: Սակայն այս տարի կապիտալ ծախսերի կատարողականը առաջին ինն ամիսներին զիջում է 2022թ. ինն ամիսներին ցուցանիշին՝ կազմելով 57.4%: Հետևաբար, հաշվի առնելով

նույնիսկ, որ մինչև տարվա վերջ այդ ցուցանիշը բարելավվելու է, էական թերակատարումների արձանագրման ռիսկերը պահպանվում են:

2024 թվականին նախատեսվում է իրականացնել շուրջ 2,511.2 մլրդ դրամի չափով ընթացիկ ծախսեր, ինչը 2023թ. սպասվող ցուցանիշից ավելի կլինի 20.1%-ով: Սա բավական բարձր աճ է՝ հաշվի առնելով ՀՀ անվանական ՀՆԱ-ի նախորդ յոթ տարիների միջին աճը, որը 2016-2022 թվականներին կազմել է մոտ 8.0%: Քանի որ, կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա վերջի դրությամբ ցածր է եղել ՀՆԱ-ի 60%-ից, ապա հարկաբյուջետային կանոններով սահմանված ընթացիկ առաջնային (առանց տոկոսավճարների) ծախսերի աճի սահմանափակումը չի գործում: Այնուամենայնիվ, օրենսդրական պահանջից բացի, դա ընթացիկ ծախսերի խելամիտ աճը ուրվագծող մոտեցում է, որի չպահպանումը կարող է հանգեցնել ընթացիկ ծախսերի՝ հարկաբյուջետային կայունությանը վնասող չափով աճին: Քանի որ ընթացիկ ծախսերի աճն էականորեն գերազանցում է ՀՆԱ-ի անվանական աճը, 2024-ին ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ ծախսերի կշիռը կհասնի 23.9%-ի՝ աճելով 1.8 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այդ աճն էապես պայմանավորված է Արցախից բռնի տեղահանված բնակչության աջակցության ծրագրերով, որոնց ծավալը կազմում է շուրջ 109.2 մլրդ դրամ: Վերջինից 47.3 մլրդ դրամն արդեն իսկ ընդունված ծրագրերի համար է նախատեսված, իսկ մնացած մասը՝ 61.9 մլրդ դրամը, տեղափոխվել է պահուստային ֆոնդ՝ տարվա ընթացքում անհրաժեշտ աջակցության ֆինանսավորման համար, քանի որ ներկա փուլում աջակցության կարիքը ամբողջությամբ գնահատված չէ:

Կապիտալ ծախսերի գծով հարկաբյուջետային կանոնը շարունակում է գործել, ըստ որի՝ կապիտալ ծախսերի մեծությունը պետք է գերազանցի բյուջեի պակասուրդը: Այս կանոնը 2024թ. բյուջեում պահպանված է: Դեռ ավելին, բյուջեի պակասուրդը նախատեսվում է շուրջ 482.9 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերի պլանավորված մակարդակը՝ 695.3 մլրդ դրամ: ՀՆԱ-ի նկատմամբ կապիտալ ծախսերը կհասնեն 6.6%-ի՝ 2023թ. համար սպասվող 5.9%-ի և 2022թ. փաստացի 4.5%-ի դիմաց:

Գծապատկեր 6. Կապիտալ ծախսերի ծավալները 2018-2023թթ. (մլրդ դրամ) և դրանց կատարողականը (%)



Սակայն, բնականաբար նման մեծ ծավալներով կապիտալ ծախսերի իրականացման հնարավորությունները դեռևս չեն երևում: Մասնավորապես, նման բարձր աճ էր նախատեսվել նաև 2022-ի և 2023-ի բյուջեներով, ինչը փաստացի չի իրականացվել և չի իրականացվում: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի մեծացումը հաշվի է առնված նաև հաջորդ տարվա տնտեսական աճի կանխատեսումներում, հետևաբար քրոնիկ թերակատարումների պահպանումը կարող է վտանգել նաև տնտեսական աճի թիրախի ապահովումը:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Պետական բյուջեի ծախսերը ներկայացվում են նաև ըստ դրանց ծախսման ուղղությունների, որը կոչվում է գործառնական դասակարգում: Այդ դասակարգմամբ ծախսերը բաժանվում են չորս հիմնական խմբերի՝


- 1) ընդհանուր նշանակության պետական ծառայություններ, որտեղ ներառվում են պետության կողմից մատուցվող ծառայությունների (պետական կառավարում, պաշտպանություն, անվտանգություն և այլն) գծով ծախսերը,
- 2) տնտեսական ծառայություններ, որտեղ ներառվում են տնտեսության զարգացմանն ուղղվող ծախսերը,
- 3) սոցիալական ծառայություններ՝ այն ծախսերը, որոնք ուղղված են բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը և մարդկային կապիտալի զարգացմանը,

4) պահուստային ֆոնդ, որը միտված է ապահովելու որոշակի ռեսուրս տարվա ընթացքում չնախատեսված, սակայն հրատապ և կարևոր ծախսեր իրականացնելու համար:

ՀՀ պետական բյուջեի կառուցվածքում էական դեր ունեն ընդհանուր նշանակության պետական ծառայությունների և սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերը, որոնց կշիռները ընդհանուր ծախսերում 2024թ. կազմելու են համապատասխանաբար 45.5% և 40.4%: Տնտեսական զարգացմանն ուղղվող ծախսերը համեմատաբար ավելի փոքր կշիռ կունենան՝ շուրջ 9.2%, որոնք, սակայն, ավելի փոքր կլինեն, քան նախատեսված էր 2023թ. բյուջեով: Փոխարենը աճելու է պահուստային ֆոնդի տեսակարար կշիռը՝ 1.4%-ից հասնելով 4.9%-ի, ինչը պայմանավորված է մի կողմից տնտեսական աճի հետ կապված ռիսկերով, մյուս կողմից՝ արցախցիներին աջակցության տրամադրման հետ կապված անորոշություններով:

2024թ. բոլոր ուղղություններով նախատեսված է ունենալ ծախսերի աճ, սակայն առավել բարձր աճերով կառանձնանան սոցիալական ծառայությունների և ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերի ծավալները՝ ունենալով համապատասխանաբար 23.3% և 18.0% աճ (Աղյուսակ 2): Պահուստային ֆոնդի աճը նույնպես էականորեն նպաստելու է ընդհանուր ծախսերի աճին:

Գծապատկեր 7. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, %



Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման

	2021 փաստ.	2022 փաստ.	2023 բյուջե	2024 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	2,004.3	2,242.6	2,591.0	3,206.5
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	877.0	1,084.7	1,236.4	1,459.4
Տնտեսական ծառայություններ	167.3	192.1	267.6	296.0
Սոցիալական ծառայություններ	960.0	965.8	1,050.7	1,295.2
Պահուստային ֆոնդ	0.0	0.0	36.2	155.9
Աճ*, %				
Ընդամենը	5.8	11.9	15.5	23.8
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	-0.7	23.7	14.0	18.0
Տնտեսական ծառայություններ	20.5	14.8	39.3	10.6
Սոցիալական ծառայություններ	10.1	0.6	8.8	23.3
Պահուստային ֆոնդ	-	-	-	-
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	-0.3	10.4	6.8	8.6
Տնտեսական ծառայություններ	1.5	1.2	3.4	1.1
Սոցիալական ծառայություններ	4.6	0.3	3.8	9.4
Պահուստային ֆոնդ	0.0	0.0	1.6	4.6


* 2023թ. բյուջեի ցուցանիշների աճերը ներկայացված են 2022թ. փաստացի ցուցանիշների համեմատ, իսկ 2024թ. բյուջեի ցուցանիշների աճերը՝ 2023թ. բյուջեի համեմատ:

Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների կազմում ներառվում են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունները, պաշտպանության և հասարակական կարգի ու անվտանգության, ինչպես նաև դատական գործունեության գծով ծախսերը: Այս ծախսերի կազմում 2024թ. բյուջեով պլանավորվում է էականորեն՝ շուրջ 32.3%-ով մեծացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծավալը՝ հասցնելով դրանք 678.9 մլրդ դրամի՝ 2022թ. փաստացի իրականացված 407.4 մլրդ դրամի դիմաց: Սակայն, պետք է նշել, որ այստեղ էական դեր ունեն հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները, որոնք ներառված են հենց այս ուղղությամբ ծախսերում: Պաշտպանությանն ուղղվող ծախսերի աճը կկազմի 7%՝ զիջելով «հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» ուղղությամբ իրականացվող ծախսերի աճին (10.3%):

Աղյուսակ 3. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2021 փաստ.	2022 փաստ.	2023 բյուջե	2024 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	877.0	1,084.7	1,236.4	1,459.4
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	381.0	407.4	513.1	678.9
Պաշտպանություն	336.0	480.4	520.5	557.0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	160.0	196.9	202.7	223.5
Աճ, %				
Ընդամենը	-0.7	23.7	14.0	18.0
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	10.6	6.9	25.9	32.3
Պաշտպանություն	-13.3	43.0	8.3	7.0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	5.7	23.0	3.0	10.3
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	4.1	3.0	9.7	13.4
Պաշտպանություն	-5.9	16.5	3.7	3.0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	1.0	4.2	0.5	1.7

Գծապատկեր 8. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %



Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը 2024 թվականին կկազմեն 296.0 մլրդ դրամ՝ 2023թ. բյուջեով նախատեսվածի համեմատ աճելով 10.6%-ով: Այս ծախսերի կազմում էական աճ է նախատեսվել շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ՝ շուրջ 17.4%, իսկ տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի աճը կկազմի շուրջ 11.2%: Ընդ որում, նախատեսվում է նաև 14.4%-ով կամ 10.4 մլրդ դրամով ավելացնել գյուղատնտեսության ոլորտի ուղղությամբ իրականացվող ծախսերը, այդ թվում 6.4 մլրդ դրամով ավելացնել գյուղատնտեսության աջակցության ծրագրերը և 3.8 մլրդ դրամով՝ ոռոգման համակարգերի բարելավման ուղղությամբ կատարվող ծախսերը: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ գյուղատնտեսության ուղղությամբ յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել ավելի մեծ ծավալով ծախսեր, սակայն ոլորտի անկման կամ բավական ցածր տեմպով աճերի խնդիրը դեռևս հնարավոր չի լինում հաղթահարել:

Աղյուսակ 4. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը


	2021 փաստ.	2022 փաստ.	2023 բյուջե	2024 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	167.3	192.1	267.6	296.0
Տնտեսական հարաբերություններ	151.8	175.8	239.3	266.0
Շրջակա միջավայրի պաշտպանություն	6.0	6.8	9.4	11.0
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	9.5	9.5	19.0	19.0
Աճ, %				
Ընդամենը	20.5	14.8	39.3	10.6
Տնտեսական հարաբերություններ	20.9	15.8	36.1	11.2
Շրջակա միջավայրի պաշտպանություն	36.2	13.0	38.0	17.4
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	7.2	-0.7	100.3	0.3
Նպաստումը, տոկոսային կետ				
Տնտեսական հարաբերություններ	18.9	14.4	33.0	10.0
Շրջակա միջավայրի պաշտպանություն	1.2	0.5	1.3	0.6
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	0.5	0.0	4.9	0.0

Հատկանշական է, որ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ուղղությամբ նախատեսվող ծախսերի աճը գրեթե զրոյական է, ինչը տարօրինակ է՝ հաշվի առնելով Արցախի բնակչությանն

աջակցելու կարիքները: Հավանաբար, դրանց գծով ծրագրերը կմշակվեն և տարվա ընթացքում կիրականացվեն պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

2024թ. բյուջեով տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքում որոշակիորեն կաճեն տնտեսական հարաբերություններին և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղվող ծախսերի կշիռները՝ համապատասխանաբար 0.4 և 0.2 տոկոսային կետով, իսկ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով ծախսերի տեսակարար կշիռը կնվազի 0.7 տոկոսային կետով: Սակայն, բյուջեի իրականացման փուլում պատկերը կարող է փոխվել՝ հաշվի առնելով արցախցիներին աջակցելու կարիքները:

Գծապատկեր 9. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %




Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը, ըստ 2024թ. բյուջեի, կկազմեն 1,295.2 մլրդ դրամ՝ 2023թ. բյուջեով նախատեսված ցուցանիշը գերազանցելով 23.3%-ով, իսկ 2022թ. փաստացի ցուցանիշը՝ 34.1%-ով: Սոցիալական ծախսերի աճին 13.4 տոկոսային կետով կնպաստեն սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը՝ 21.6% աճով, որի կազմում 10.6%-ով ընդգրկված է աշխատանքային կենսաթոշակի գծով ծախսերի աճը: Այդ աճը ներառում է ինչպես կենսաթոշակների աճը, այնպես էլ կենսաթոշակառուների աճը: Բարձր աճ է նախատեսված նաև կրթության ոլորտում՝ 2023թ. բյուջեի համեմատ շուրջ 37.2%, որը հիմնականում պայմանավորված կլինի միջնակարգ կրթության ֆինանսավորման ավելի քան կրկնակի աճով, որն էլ պարունակում է դպրոցների կառուցման ֆինանսավորումը: Սոցիալական ծառայությունների գծով ծախսերի աճին կնպաստի նաև առողջապահությանն ուղղված ծախսերի 14.0% աճը:

Աղյուսակ 5. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2021 փաստ.	2022 փաստ.	2023 բյուջե	2024 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	960.0	965.8	1,050.7	1,295.2
Առողջապահություն	160.5	142.2	149.0	169.9
Հանգիստ, մշակույթ և կրոն	30.4	43.9	36.4	40.2
Կրթություն	149.1	165.4	211.9	290.7
Սոցիալական պաշտպանություն	620.0	614.5	653.5	794.5
Աճ, %				
Ընդամենը	10.1	0.6	8.8	23.3
Առողջապահություն	8.3	-11.4	4.8	14.0
Հանգիստ, մշակույթ և կրոն	-9.5	44.2	-17.1	10.4
Կրթություն	3.7	10.9	28.1	37.2
Սոցիալական պաշտպանություն	13.4	-0.9	6.3	21.6
Նպաստումը, տոկոսային կետ				
Առողջապահություն	1.4	-1.9	0.7	2.0
Հանգիստ, մշակույթ և կրոն	-0.4	1.4	-0.8	0.4
Կրթություն	0.6	1.7	4.8	7.5
Սոցիալական պաշտպանություն	8.4	-0.6	4.0	13.4

Գծապատկեր 10. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %




Արդյունքում, 2024թ. բյուջեի սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքում կաճի կրթությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը և հարկաբյուջետային ազդակը

2024 թվականին, ընթացիկ և կապիտալ ծախսերի ավելացման հաշվին պետական բյուջեի պակասուրդը կավելանա՝ կազմելով ՀՆԱ-ի 4.6%-ը:


Միաժամանակ, պետք է նշել, որ պակասուրդի ավելացումը պետք է դիտարկել այն գործոնը հաշվի առնելով, որ բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կազմից դեպի ծախսերի կազմ են տեղափոխվել Արցախի աջակցությանն ուղղվող գումարները (որոնք նախկինում գրանցվում էին որպես միջպետական վարկ Արցախին և չէին մեծացնում ծախսերը, հետևաբար նաև պակասուրդը): Այս գործոնը հանգեցրել է վիճակագրական տեսակետից բյուջեի պակասուրդի էական աճի, սակայն բյուջեի փոխառությունների կարիքի և հետևաբար՝ կառավարության պարտքի վրա ազդեցությունը (ըստ էության՝ լրացուցիչ հարկաբյուջետային ճնշումը) առավել սահմանափակ է լինելու՝ կազմելով 2024թ. պակասուրդի, 2023-ի պակասուրդի և ԼՂ վարկավորման հանրագումարի տարբերությունը (0.5%-ային կետ՝ 2%-ային կետի փոխարեն): Արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը կդառնա չեզոք (0.3 ազդակով), որը թույլ կտա ապահովել հարկաբյուջետային քաղաքականության պատշաճ արձագանքն անհետաձգելի ծախսային կարիքներին՝ միաժամանակ չառաջացնելով լրացուցիչ գնաճային ճնշումներ:

Գծապատկեր 11. Պետական բյուջեի պակասուրդը



Բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը հիմնականում իրականացվելու է ներքին միջոցների հաշվին: Մասնավորապես, 2024թ. 482.9 մլրդ դրամ պակասուրդի ֆինանսավորման համար իրականացվելու է գանձապետական պարտատոմսերի 350.8 մլրդ դրամ չափով զուտ տեղաբաշխում (տեղաբաշխման և մարման տարբերությունը), իսկ արտաքին փոխառությունների զուտ ներգրավումը կազմելու է 140.0 մլրդ դրամ: Ընդ որում, ինչպես գանձապետական պարտատոմսերի զուտ տեղաբաշխումը, այնպես էլ արտաքին փոխառությունների զուտ ստանձնումը աճելու են 2023թ. բյուջեով նախատեսվածի համեմատ՝ համապատասխանաբար 48.4 և 16.6 մլրդ դրամով:

Գծապատկեր 12. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ




ՀՀ պետական պարտքը

ՀՀ 2024թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2023 թվականի վերջում պետական պարտքը կկազմի 4,659 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.3%-ը, իսկ 2024 թվականի վերջում՝ 5,314 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 50.5%-ը:

Ըստ կանխատեսումների՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,442 մլրդ դրամ, իսկ 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,083 մլրդ դրամ:

Կառավարության պարտքի մակարդակը նախորդ տարվա տվյալներով էականորեն նվազել է՝ 2022-ի վերջի դրությամբ կազմելով 46.7%, որին էական նպաստում էր ունեցել փոխարժեքի արժևորումը: Հետևաբար, քանի որ ընթացիկ տարվա վերջում սպասվում է, որ փոխարժեքը որոշակիորեն արժեզրկված կլինի նախորդ տարվա վերջի համեմատ, պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նույնպես որոշակիորեն կաճի՝ հասնելով 49.8%-ի: Վերջինս, սակայն, պայմանավորված կլինի նաև 2022թ. համեմատ պակասուրդի աճով:

Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2019-2024թթ., %



2024թ. պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կունենա նվազման միտում՝ հասնելով 48.3%-ի և 2023թ. սպասվող ցուցանիշի համեմատ նվազելով 1.5 տոկոսային կետով: Ընդ որում, արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի շուրջ 2.2 տոկոսային կետով, մինչդեռ ներքին պարտքը կաճի 0.7 տոկոսային կետով՝ հասնելով 21.8%-ի:

ԱՄՓՈՓՈՒՄ

2023թ. տնտեսական աճը, կրելով նախորդ տարվա դրական գործոնների ազդեցությունները, շարունակում է մնալ բարձր, սակայն ունի դանդաղման միտում: Տարեսկզբին տնտեսական աճը բավական բարձր էր, սակայն տարվա երկրորդ կեսին՝ հունիս-հուլիս ամիսներից սկսած տնտեսական ակտիվության աճի տեմպը դանդաղել է՝ գտնվելով 6%-ի շուրջ մակարդակում: Եթե աճի տեմպի դանդաղումը շարունակվի, ապա 2024թ. կարող է վտանգվել կառավարության 7% թիրախի ապահովումը, ինչն էլ կհանգեցնի բյուջեի կատարման դժվարությունների, քանի որ կնվազեն նաև հարկային եկամուտները: Բացի կառավարությունից, այլ կառույցների կանխատեսումները 2024թ. համար տնտեսական աճի վերաբերյալ 7%-ից ցածր տիրույթում են, ինչը որոշակի ռիսկերի մասին է մատնանշում: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ բյուջեի ուղերձում այս մասին ևս նշվում է, և նախատեսվել է պահուստային ֆոնդում որոշակի ռեսուրսի պահպանում՝ տնտեսական աճի թիրախի չապահովման դեպքում ծախսերի կրճատման հնարավորություն ունենալու համար:

Տնտեսական աճի թիրախի ապահովման համար անհրաժեշտ ներդրումների և արտահանման ծավալների ապահովմանն ուղղված միջոցառումներ առկա չեն: Ինչպես վերևում նշվեց, 2024թ. բյուջեն հիմնված է 7% տնտեսական աճի թիրախի վրա, սակայն, կանխատեսումները հուշում են, որ աճը կարող է լինել 5.6%-ի չափ: Հետևաբար 7%-ին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել լրացուցիչ մասնավոր ներդրումների և արտահանման ծավալների աճ: Սակայն, բյուջեի ծախսերի ծրագրերի հատվածում ներդրումների և արտահանման խթանմանն ուղղված հստակ միջոցառումներ ներկայացված չեն, որոնք կբացահայտեին, թե որքանով հնարավոր կլինի հաջորդ տարի նպաստել ներդրումների և արտահանման աճին: Ծրագրերի մասին ոչ ամբողջական տեղեկատվության առկայությունը ներդրումների և արտահանման անհրաժեշտ չափով աճի հավանականությունը բավական անորոշ է դարձնում՝ հարցականի տակ դնելով նաև թիրախային տնտեսական աճի ապահովումը:

Բյուջեի հիմքում դրված է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության էական բարելավում, որի իրագործումն էական դժվարություններ, հետևաբար նաև ռիսկեր է պարունակում: 2023թ. հարկեր/ՀՆԱ-ն պետք է բարելավվի շուրջ 1.0 տոկոսային կետով, իսկ հաջորդ տարի՝ ևս 0.75 տոկոսային կետով: Ընդ որում, բավական մեծ շեշտադրում է առկա վարչարարության բարելավման վրա, որն ավելի անորոշ և ռիսկային է: ՀՀ պատմության ընթացքում, երկու տարվա մեջ 1.75 տոկոսային կետով հարկեր/ՀՆԱ-ի բարելավում դեռևս տեղի չի ունեցել: Չնայած նրան, որ նախատեսվում են նաև հարկերի բարձրացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ, այնուամենայնիվ դրանք այդքան մեծ ազդեցություն չեն ունենա հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա: Հետևաբար, այս մասով ևս պետք է նախատեսել որոշակի պահուստային «բարձիկներ» հարկերի հնարավոր թերհավաքագրման պայմաններում հարկաբյուջետային կայունության ապահովման համար:

2024թ. պետական բյուջեով և՛ եկամուտների գծով, և՛ ծախսերի գծով նախատեսված են էական աճեր: 2024թ. եկամուտների գծով կանխատեսվում է շուրջ 13.1%, իսկ ծախսերի գծով՝ 20.8% աճ: Ծախսերի գծով աճը ներառում է նաև Արցախից բռնի տեղահանված բնակչության աջակցության գումարները, որոնց ծավալը կազմում է շուրջ 109.2 մլրդ դրամ: Վերջինից 47.3 մլրդ դրամն արդեն իսկ ընդունված ծրագրերի համար է նախատեսված, իսկ մնացած մասը՝ 61.9 մլրդ դրամը, տեղափոխվել է պահուստային ֆոնդ՝ տարվա ընթացքում անհրաժեշտ աջակցության ֆինանսավորման համար, քանի որ ներկա փուլում աջակցության կարիքն ամբողջությամբ գնահատված չէ:

Կապիտալ ծախսերի գծով շարունակում են պլանավորվել անիրատեսական մեծություններ: Կապիտալ ծախսերը նախատեսվում է 2024թ. հասցնել ՀՆԱ-ի 6.6%-ին՝ 2023թ. համար սպասվող 5.9%-ի և 2022թ. փաստացի 4.5%-ի դիմաց: Սակայն, 2023թ. կապիտալ ծախսերն ունեն բավական ցածր կատարողական՝ հունվար-սեպտեմբերի կատարողականը կազմել է ընդամենը 57.4%, ինչը հուշում է, որ կապիտալ ծախսերի քրոնիկ թերակատարման խնդիրը դեռևս չի լուծվել և շարունակելու է մնալ նաև ապագայում, քանի որ դրա ուղղությամբ որևէ էական քայլ չի ձեռնարկվում: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի մեծացումը հաշվի է առնված նաև հաջորդ տարվա տնտեսական աճի կանխատեսումներում, հետևաբար քրոնիկ թերակատարումների պահպանումը կարող է վտանգել նաև տնտեսական աճի թիրախի ապահովումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: